



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

### Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » մարտի 2015 թ.

N 21

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի և դատախազի  
միջև աշխատանքի բաժանման մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ, 73-րդ հոդվածների և ԼՂՀ դատախազության Կանոնակարգի 13-րդ կետի համաձայն՝ աշխատանքների որակյալ կազմակերպման նպատակով ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի և դատախազի միջև կատարել աշխատանքի բաժանում՝

1. ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ջոյա Լյուդվիգի Օսիայանին – իրականացնել ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի և ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննիչների կողմից ստուգվող նյութերով, քննվող քրեական գործերով դատավարական ղեկավարում ու հսկողություն և ԼՂՀ Գլխավոր դատախազի կողմից տրվող այլ հանձնարարականներ:

2. ԼՂՀ Գլխավոր դատախազության դատախազ, արդարադատության 1-ին դասի խորհրդական Վասիլի Նիկոլայի Վանյանին – իրականացնել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն:

3. Նշված աշխատանքների բաժանումը չի սահմանափակում վերը նշված քննչական մարմինների կողմից քննվող քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարումն իմ կողմից հանձնարարելու այլ դատախազների:

4. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 18 առ 04.02.2009 թ. « ԼՂՀ դատախազության ավագ դատախազների և դատախազի միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին»; թիվ 26 առ 08.06.2011 թ., թիվ 27 առ 13.06.2011 թ., թիվ 28 առ 13.06.2011 թ. « ԼՂՀ դատախազության ավագ դատախազների և դատախազի միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին հրամանում փոփոխություն կատարելու մասին» հրամանները:

5. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ քաղաքացիապետներին:

6 . Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի  
պետական խորհրդական**

**Ա.Ա.Մոսիյան**